



## AMS ի Կարևոր Ծառայություններ

**AMS** (Աշխատանք միջնորդող պետական գրասենյակ)

**AMS** ի գրանցվելու համար պայման է:

a.) Աշխատելու ի վիճակի, b.) աշխատելու պատրաստ եւ c.) գործազուրկ (անգործ) ըլլալ:

➤ Անգործ անձերն շաբաթական, **20** ժամ աշխատելու պատրաստ պետք է ըլլան:

➤ Անգործ անձեր որոնք **10** տարեկանէն փոքր կամ խնամքի կարօտ հաշմանդամ երեխաներ ունեն, **16** ժամ աշխատելու պատրաստ պետք է ըլլան:

Ոչ **EU (Եւրոպական միութիւն)** քաղաքացիները պետք է բնակւելու իրավունք ունենան, որը կը թոյլադրէ աշխատել:

### Անգործության փող (Arbeitslosengeld)

Անգործության փողի իրաւունք կատարուի յետեւեալ կետերով:

- Առաջին անգամ ստացողները, վերջին **2** տարիների ընթացքում պետք է ունենան **52** շաբաթ գործազրկության նպաստող աշխատանք

- Հետագայում դիմելու պարագային, վերջին **12** ամիսների ընթացքում պետք է ունենալ **28** շաբաթ գործազրկության նպաստող աշխատանք

- մինչեւ **25** տարեկանի անգործ անձերու համար, վերջին **12** ամիսների ընթացքում պետք է ունենան **26** բաթ գործազրկության նպաստող աշխատանք

### Աշխատելու պատրաստ ըլլալ (Arbeitswilligkeit)

նշանակում է, աշխատելու եւ դասընթացքների մասնակցելու պատրաստ ըլլալ:

### Ընդունելի աշխատանքներ (Zumutbare Beschäftigungen)

➤ **Լրիւ** օրական աշխատանքի պարագային, մինչեւ **2** ժամ ճամփու հեռաւորութիւն ունեցող գործերն ընդունելի են:

➤ Իսկ **կէս** օրական աշխատանքի համար, մինչեւ **1 ½** ժամ ճամփու հեռաւորութիւն ունեցող գործերն ընդունելի են:

### Անգործության փողի իրավունքէն զրկվել (Sperr)

Անգործ անձերը, առաջարկուած գործերու **անհիմն մերժման** դէպքում, առաջին անգամ **6** շաբաթ, կրկնութեան պարագային **8** շաբաթ, անգործության փողի իրավունքէն կը զրկվին:

### Անգործության փողի տեւողությունը (Bezugsdauer)

Քործազրկության փողի իրավունքի տեւողությունը կախյալ է a.) նախորդ աշխատանքի ժամանակաշրջաններու եւ b.) գործազուրկներու տարիքից:

- **20 շաբաթէ:** նվազագոյն տեւողությունը,

- **30 շաբաթէ:** եթէ այն գործազուրկ անձը նվազագոյն **3** տարի գործազրկության նպաստող աշխատանք ունենայ,

- **39 շաբաթէ:** եթէ այն գործազուրկ անձը **40** տարեկանից հետո վերջին **10** տարիներու ընթացքում **6** տարի գործազրկության նպաստող աշխատանք ունենայ,

- **52 շաբաթէ:** եթէ այն գործազուրկ անձը **50** տարեկանից հետո վերջին **15** տարիներու ընթացքում **9** տարի գործազրկության նպաստող աշխատանք ունենայ,

### Անգործության փողը ստանալու շարունակել (Fortbezug):

Անգործության փողի ընդհատման դէպքում, գործազուրկ անձերի իրավունքը, սկսեալ վերջին ստացած օրէն, **5** տարվայ ընթացքում կը շարունակւի:

### Անգործության փողի ընդհատումը (Ruhen)

Հիվանդ գրանցվելու պարագային, **4** օրէնէ յետոյ անգործության փողը կը **ընդհատուի:**

**Անգործության դրամի քանակությունը (Höhe des Arbeitslosengeldes):**

- a. Ամսաթիվու մինչև **Հունիս 30**, AMS ին անգործության դիմող անձերու համար, իր **Նախավերջին** տարեկան եկամուտի միջինը հաշվարկվելով կվճարվի:
  - b. իսկ ամսաթիվու **01. Հուլիս** յետոյ, AMS ին անգործության դիմող անձերու համար, իր **վերջին** տարեկան եկամուտի միջինը կը հաշվվի:
    - Այդ օրական գուտ եկամուտի **60-80%** տոկոսը, **անգործության դրամի քանակությունը** կը ներկայացնէ:
- 45 տարեկանից յետոյ անգործության փողի քանակությունը, անցեալի ամենա բարձր ստացած գործազրկության գումարէն աւելի ցածր պէտք է չըլլայ: Հաշվիչ: <http://ams.brz.gov.at/ams/>**

**Արտակարգ օգնության փող (Notstandshilfe)**

- Անգործության դրամի իրավունքը վերջանալէն յետոյ, կրնան գործազուրկ անձերը **արտակարգ օգնության փողի** համար դիմել: Այդ պարագային, իրենց ընտանիքի եկամուտը նկատի առնելով, առաւելն իրենց անգործության դրամի **90-95%** տոկոսը կստանան:
- Ընտանիքի բարցր եկամուտի պատճառով, արտակարգ օգնության իրավունք չստացող անցերի բժշկական եւ թոշակի ապահովությունները **AMS** ին գրանցւելու պայմանով կը շարունակվի:
- **AMS** ին գրանցւած եւ օգնութիւն ստացող անձերը, կունենան **բժշկական, թոշակի եւ արկածի ապահովություններ**:

**Կարեւոր Հրահանգներ (Wichtige Hinweise)**

- Արտասահման գտնւելու ընթացքում, անգործության փողը աւարտելուց յետոյ, **6 շաբաթ** կը շարունակվի բժշկական ապահովութիւնը, ունենալու պայմանով, վերջին մեկ տարւայ մէջ **առնվազն 26 շաբաթ** կամ ալ **անընդհատ 6 շաբաթ** ապահովագրութիւն:
  - Յուրաքանչյուր աշխատանք ստանալու դէպքում, պէտք է անմիջապէս **AMS** ին հաղորդել:
- Անգործության **կամ** արտակարգ օգնության փող ստանալու ընթացքում, կարող է վաստակել **առավելագոյն** ամսական **brutto € 460,66 (2020)**
- Իրենց գործէն **կամաւոր հրաժարող** անձերը, **4 շաբաթ** անգործության կամ արտակարգ օգնության դրամներէ կը զրկւին:
  - կարելու է ճիշտ հետեւել **AMS** ի ժամադրություններու:
  - Բոլոր փոփոխությունները (հիվանդություն, Տեղափոխադրիլ, արտասահմանային ճամբորդություններ) ամենա ուշը **1 շաբաթւայ** ընդացքին պէտք է տեղեկացնել:

**Ուշադրութիւն!!!!** Քանի որ վերի տեղեկությունները համառոտ գրւած են, Կը խնթրենք մանրամասութիւնները տեղեկանալու համար դիմեցէք **կառավարական մատիւններու** կամ **կազմակերպություններու**, եւ կը նշենք որ, եթէ հանդերձ մեր ուշադրութեան, սխալներ գտնւեն, պատասխանատուութիւն չենք կրել:

Beratung für Männer und Frauen 1010 Wien, Hoher Markt 8/4/2 Tel: 01 712 56 04 <a href="http://www.migrant.at">http://www.migrant.at</a> E-Mail: <a href="mailto:migrant@migrant.at">migrant@migrant.at</a>	Beratung für Frauen 1010 Wien, Marc Aurel Straße 2a/6/2/10 Tel: 01 982 33 08 <a href="http://www.migrant.at">http://www.migrant.at</a> E-Mail: <a href="mailto:migrantin@migrant.at">migrantin@migrant.at</a>
Diese Publikation wird aus Mitteln des Arbeitsmarktservice Wien und der Magistratsabteilung 17 gefördert	
 <p><b>AMS</b> Arbeitsmarktservice Wien</p>	 <p><b>Stadt Wien</b> Integration und Diversität</p>